

**Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 89-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻ ԱՌԻԹՈՎ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(24 ապրիլի 2004 թ.)

*«Որդի մարդոյ երթայ՝ որպէս գրեալ է վասն նորա.
բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն որդին մարդոյ
մատնեացի. լաւ էր նմա՝ թէ չէր ծնեալ մարդն այն»:*

*«Մարդու Որդին կգնա այս աշխարհից, ինչպես նրա
մասին գրված է, բայց վա՛յ այն մարդուն, ում ձեռքով
կմատնւի մարդու Որդին: Այլեւի լաւ կլինէր նրա
համար, եթե այդ մարդը ծնւած չլինէր»:*
(Մատթ. ԻԶ 24)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Տոգոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացյալ բույրեր և եղբայրներ.

Հայոց Մեծ եղեռնի ապրիլըսանդոսյան հիշատակության այս օրը Մաքրեսուի Ավել-
ւարանի ԻԶ գլխի 24-րդ համարում արձանագրված այս խոսքերն են այսօր խոսում մեր
սրբերին, խոսքեր, որոնք Քրիստոս ասաց, երբ Իր աշակերտների հետ Վերնապանը վեր-
ջին Ընթրիքին էր նստած: Քրիստոս սովորաբար Իր մասին արտահայտվում էր երրորդ
դեմքով՝ իբրև Անձ, Որ կողքից է դիպում և շար հաճախ Ինքն Իրեն անվանում էր Մարդու
Որդի: Եվ ահա այդպիսի հանդիպումներից մեկի ժամանակ Ինքը խոսելով Իր առաքելութ-
յան մասին, աշակերտներին մեկնելով՝ բացատրելով փակավին սպասվելիք բաները՝ հաս-
տատարում է, որ Մարդու Որդին պիտի մեկնի այս աշխարհից, պիտի մահանա, բայց վա՛յ այն
անձին, որի միջոցով, որի դավադիր ձեռքով Ինքը պիտի մեկնի այս աշխարհից: Այդպիսի
մարդու համար լավ կլինէր, որ նա ծնված չլինէր:

Բնական է, որ բոլոր մարդիկս այնպես, ինչպես Ս. Գրոց մեջ արձանագրված է, մեր
կյանքերն անցկացնում ենք ինչպես դաշտի խոտերը՝ և դաշտի բույսերը: Ապրում ենք որոշ
ժամանակահատված և դրանից հետո թառամելով՝ մեկնում այս աշխարհից: Ահա յուրա-
քանցյուրս մեզ հասանելիք կյանքը այս աշխարհի մեջ ապրելով, վաստակելով, ծառայելով,
յրբնելով՝ այլևս դադարում ենք գոյություն ունենալ այս աշխարհում: Բայց վա՛յ այն անձե-
րին, ովքեր որ բռնությամբ, վա՛յ այն անձերին, ովքեր որ բռնադատությամբ մարդկանց
հրաժարեցնում են իրենց կյանքից:

Եվ ահա այսօր վերափին այն օրն է, նրբ յուրաքանցյուր անձ, յուրաքանցյուր քրիստոնյա,
բաղաբակիրք աշխարհի յուրաքանցյուր ներկայացուցիչ իր ձայնը պիտի բարձրացնի՝ դա-

փապարտելու այն ոճիրը, որի պատճառով շուրջ 89 փարիսներ առաջ մեկ և կես միլիոն մեր ազգակիցներ բռնությամբ զրկվեցին Աստուծոց պարգևված իրենց կյանքերից: Իրապես այդ մարդիկ 89 փարիսներ առաջ ապրում էին ինքնավար օրենքներով, ունեին երազներ, ունեին իղձեր, ունեին ժամանակ՝ Աստուծոց իրենց հարկացված, փակավին ապրելու: Բայց, այնուհանդերձ, մարդիկ, լինելով մահականացուներ, միևնույն է, պետք է մեկնեին այս աշխարհից: Բայց վա՛յ այն անձերին, վա՛յ այն երկրին ու ժողովրդին, որը բռնությամբ, կեղեքումով, դաժանաբար զրկեց մեր ժողովրդի զավակներին ապրելու և սրբեղծագործելու իրավունքից:

Անցել են 89 փարիսներ Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի հանդեպ իրականացված մեծազույն այդ եղեռնագործությունները հավաքաբար ամփոփող օրվանից՝ ապրիլ 24-ից, երբ ֆիզիկապես, ուղղակիորեն ֆիզիկապես բնաջնջվեցին շուրջ մեկ և կես միլիոն հայեր՝ մանուկներ, երիտասարդներ և ծերեր, սպանվեցին անմեղ ու անզեն մարդիկ: Եվ ինչպես փրկեցի համար՝ Նրա բարերարություններն ուրացած ապերախ ու զազազած ամբոխը գոչում էր, թե՛ «Խաջը հանիր, խաջը հանիր Դրան» (Նովի. ԺԹ. 6), երբեք և բաղաձայն չէին կոչվում աշխարհը լեռնային, անձայն և անխոս թույլ փվեց ոճիրը և սպանող՝ մի ժողովրդի նկատմամբ, որը բազում ծառայություններ ուներ քաղաքակրթություններ փրկելու և ժողովրդի կյանքում և ընդհանրապես քաղաքակրթություն ձևավորելու առաքելության մեջ, մի ժողովուրդ, որ եթե երբեք մարտաշունչ ու ռազմավար չէր, իր գրեթե ու դպրությամբ, իր մարտականությամբ ու մագաղաթներով է եղել:

«Մարդու Որդին պիտի մեկնի, բայց վայ նրան, ում միջոցով, ում ձեռքով Ինքը պիտի մարմնավի»: Երբ վերստին ենք հիշում այդ խոսքը, վերստին հիշում ենք Հայոց Եղեռնի անմեղ զոհերին և վերստին մեր աղոթքը բարձրացնում նրանց հոգիների համար: Եղեռնի անմեղ զոհերը, հարկավ, փարիսներ հետո յուրաքանչյուրը, իր ժամանակի հասնելուն պես, պիտի մեկնեն այս աշխարհից, ինչպես մեռան, ինչպես իրենց վախճանը գտան եղեռնից մազապուրծ շար ու շար հայեր՝ ցավ ու կսկիծ, հայրենյաց կարոտ ու փրկման հոգիներում: Բայց իրապես և վերստին վա՛յ և վա՛յ այն անձերին, որոնց ձեռքով մեռան այդ մարդիկ, նահապարակվեցին, սպանվեցին: Եվ իսկապես, լավ կլինե՞ր, որ նրանք, ծնված չլինեին և չժառանգեին ծնող ու զավակ կորցրած մի ողջ ժողովրդի նգովը և անեծք, ծնված չլինեին և չդառնային խարան մարդկության խղճին:

Միտելի քույրեր և եղբայրներ, այսօր վերստին վերապրումի օրն է սոսկալի այդ արհավիրքի: Հայոց Հայրապետը եկեղեցականների շքախմբով և հայրենի մեր երկրի պետական ավագանին, Հանրապետության նախագահի գլխավորությամբ, այցելում են Դիմենականաբերդ, ուխտավորները լինելով եղեռնի անմեղ զոհերի շիրիմներին:

Մենք ազգովի՝ ողջ ժողովրդով ժամադրության ենք այսօր Ապրիլյան նահապարակների հետ, գլուխ ենք խոնարհում նրանց հիշատակին, Հոգեհանգստյան պաշտամունք ենք մատուցում և վերստին ու վերստին հիշում խողխողված նահապարակներին, առնանգված ու անարգված կույսերին, գլխավորված մորավորականներին, յաթաղանված ալեգարդ ծերունիներին ու մայրերին: Հիշում ենք նաև այդ դժևի ժամանակների ժամանակակից Գարեգին Առաջին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Հովսեփյանի նկարագրությունը փարագրված հայերի մասին, որոնք Արևմտյան Հայաստանից հրաշքով փրկվեցին և մի կերպ հասան Էջմիածին, Արարաբյան աշխարհ:

«Երասխի ափերից մինչև Էջմիածին,- գրում է Հովսեփյան Կաթողիկոսը,- պողոտայի երկու կողմերը, վանքի ընդարձակ անտառի ու ճեմարանի բակի և պարտեզի մեջ, պարիսպների փակ փռված էին մութավորապես 150 000 փախստականներ: Ճանապարհի հոգևածությունը, սենդի պակասությունը, համաճարակները իրենց ավերն էին գործում: Տարածվել էր ժանտախարը: Մարդիկ փոսեր էին փորում արդեն մահացածներին թաղելու համար»: Ահա այսպիսին էր դաժան իրողությունը:

Եվ այս ամենն ինչպե՞ս արդյոք եղերեղու հղարձներ Սիամանթոյին և չընդվզեցներ ճակարագրի դեմ, ինչպե՞ս պախարակել չար մարդկային արդարությունը և ինչպե՞ս չխնայեցներ Կոմիտաս Վարդապետին, և արդյոք ինչպե՞ս մեր ողջ ժողովրդի մայրը կոչված լինելու այս հասարակությունն իր պարիսպներից ներս չկրեր հիշատակներ, չկրեր մասունքներ այդ անմեղ զոհերի:

Տեսե՛ք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը. սրբացած զաղթական հայրողիների արյունով և մասունքներով՝ հիշատակներ ցեղասպանության: Ո՛ր կողմ քայլե՞ մասունք և հուշարձան-Կաթնաղբյուր՝ եղեռն վերապրած հայի արցունքով, խաչքարերի համաձուլվածք այս Տաճարի մոտ: Հուշարձաններից առավել վկայարաններ են սրանք, ուր խոսում են նահապականների հոգիները, վկայարան, որ ուխտի ենք կանգնելու և ուխտ ենք կնքելու Աստծո հետ, ուխտ՝ հավատարիմ մնալու նահապականների հիշատակին, ուխտ ենք կնքելու՝ մեր կյանքով, սրտով և գործով մեր աշխարհներով հաստատելու մեր հավատարմությունը նրանց սուրբ հիշատակին:

Լացն ու ողբը չէ, սակայն, մեր ճամփան, աշխարհին մենք լացով, թղթե մեր շերեփով հեւարաբքի չենք, աշխարհին հեւարաբքի չենք մեր՝ իրենց նկատմամբ արված նվիրվածության հավաստիացումներով և ոչ էլ ինքնասիրությանից ավելի այլասիրությամբ, այսինքն՝ ինքնամեղձ այլասիրությամբ: Քրիստոնեությունը դա չէ, քրիստոնեությունն ինքնությունը հասարակող այլասիրությունն է: Այս Ս. Եկեղեցին հարյուր երեսուներկու իր Հայրապետներով երբեք ու երբեք պարտեզամի փող չհնչեցրեց և չի հնչեցնելու ո՛չ այլամեղձության և ո՛չ արեւելության՝ որոմներ սերմանելով իր հավատացյալների մեջ: Եթե մի ձայն, մի պարզամեղ հնչել է այս Ս. Սեդակից և այս սուրբ կամարների ներքո, եղել է կոչ միաբանության, եղել է հրավեր խաղաղության:

Եվ այսօր, Ապրիլյան նահապականների ոգեկոչման այս օրը, երբեք է հրավերն այդ. հրավեր հավատարմության նահապականների հիշատակին, կոչ միաբանության, հրավեր դարձի դեպի արմատները: «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծուր կրկնեսցի» (Փիլիպ. Բ 10), - ասում է առաքյալը, Հիսուս Քրիստոսի անվան առջև բոլորը թող ծուկի կզան: Խաղաղություն է Հիսուսի անունը, սեր է Նրա անունը, միաբանություն և մանավանդ կյանք է Հիսուսի անունը, և բոլորս ծուր պիտի դնենք միաբանության, սիրո և կյանքի փաճարներում, որպեսզի ապրենք, ապրենք հիշատակով նահապականների:

Պիտի աղոթենք նրանց աղոթքի վայրերում, պիտի սիրենք այնպես, ինչպես իրենք սիրեցին, պիտի նվիրվենք այնպես, ինչպես իրենք նվիրվեցին իրենց ազգային արժեքներին և արժանապարկությանը: Այլոց ականակուռ պարմունքները մեր մարմնի բարեձև չեն, այլոց շքեղ դրյակներն անհարմար են մեզ, մեր համեստ պարեզու մեզ առավել սրտամուր է, դրանով ենք մենք հեւարաբքի այս աշխարհին, քանի որ մերն է այդ պարեզուրը:

Մեր փուլը դոյակ չէ, մեր փուլը հյուղակ է, խրճիթ, բայց մերն է, մերը, ուր ապրեցին, գործեցին և որին նվիրվեցին մեր նահապակաները: Մենք մեր դեմքով, մեր գույնով, մեր փնով ու փարագով ենք հեփաթթքի աշխարհին: Եվ աշխարհի բազմազանության մեջ այդ առանձնահատկություններով է, որ մեզ մարդիկ և հանրությունները ճանաչելու են:

Արդ, սիրելի թույրեր և եղբայրներ, սիրենք մեր փուլը, մեր հայրենիքը, փուլը, ուր ապրեցին Ապրիլյան նահապակաները: Եթե ոչ լալով, գեթ ցավով եղեռնի, որ ընդհանրական է, միավորվենք: Ապրիլյան նահապականների մահվանից հետո կյանքի 89-րդ այս հանգրվանին վերստին հիշենք, որ ապրում են նրանք, ովքեր պարտասու են մեռնելու, և մեռնում են նրանք, ովքեր իրենց ապրած ժամանակում արդեն իսկ մահացած են: Մահն ամենասարսափելին չէ, որ պիտի մարդու որդիների հետ պատահի, ամենից սարսափելին և ամենից երկյուղալին դա մոռացումն է, մսխված, չօգտագործված կյանքը: Մոռացումով մոռացվում է ոչ միայն մոռացվածը, այլ նաև՝ մոռացողը:

Արդ, ապրիլ 24-ի նահապականների հիշատակով վերստին հիշենք, որ ապրելու համար անհրաժեշտ է սովորել մեռնել, պարտավոր ենք հիշել, որ ընդհանուր շահի առջև պարտավոր ենք սովորել մոռանալ անձնական և եսական ցանկացած դրսևորում:

Ահա այս է, սիրելի թույրեր և եղբայրներ, ապրիլ 24-ի խորհուրդը, խորհուրդ աղոթքի, խորհուրդ անդրադարձումի, խորհուրդ մրահայեցողության: Եվ այս հայեցողությամբ է, որ խնդրում ենք Տիրոջից, որ գթա Իր արարչական սիրով, ամենողորմ Իր սիրով Ապրիլյան անմեղ զոհերի հոգիները և նրանց կարգի Իր երկնային երանական լուսեղեն բարձունքներում:

Թող Տերը ամենագութ Իր ողորմությամբ հավիտենական Իր հարկերում լույսերի մեջ պահի և պահպանի մեր անմեղ նահապականների հոգիները: Թող Տերը ուժ, կորով, վճռակալություն պարգևի մեր ժողովրդի բոլոր զավակներին՝ զորացնելով ամենքիս մեջ կամքն ապրելու, զորացնելով ամենքիս մեջ կամքը՝ հիշելու և հավատարմություն դրսևորելու անմեղ նահապականների հիշատակին, ապրելու և սրբեղծագործելու, նվիրվելու և աշխատելու այնպես, ինչպես որ դա արեցին Ապրիլյան նահապականները՝ Տիրոջից իրենց պարգևված կյանքի փարիներին այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն: